

12.11.13

ԼՂՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովը սույն թվականի նոյեմբերի 2-ից Ստեփանակերտ քաղաքում և հանրապետության շրջաններում ընտրական հանձնաժողովների անդամության թեկնածուների համար կազմակերպում է մասնագիտական դասընթացներ՝ ըստ ներկայացված հայտերի:

Ստեփանակերտի տարածքային ընտրական հանձնաժողովի նախաձեռնությամբ նոյեմբերի 9-ին մայրաքաղաքի հ. 3 դպրոցում կազմակերպված նմանատիպ դասընթացները տեղամասային ընտրական հանձնաժողովների անդամության թեկնածուների համար էին: Ներկա էին նաև Ստեփանակերտի տարածքային ընտրական հանձնաժողովի անդամները:

Դասընթացները վարում էին ԼՂՀ ԿԸՀ նախագահ Սրբուհի Արզումանյանը, տեղակալ Եղիշե Արզումանյանը, քարտուղար Ռայա Նազարյանը:

Ինչպես նշեց Սրբուհի Արզումանյանը, դասընթացների կազմակերպումը օրենսդրական պահանջ է: Երեք տարին մեկ տեղամասային ընտրական հանձնաժողովների անդամության թեկնածուները պարտադիր կերպով պետք է համապատասխան ուսուցում անցնեն, ստուգարք հանձնեն և ստանան վկայական: Այնպես որ՝ դասընթացներին մասնակցող տեղամասային ընտրական հանձնաժողովների անդամության թեկնածուներն առաջին անգամ չէին մասնակցում նման միջոցառման, ուստի և ընտրական գործընթացի բավականին հարուստ փորձ ունեն: Ներկայումս լրացել է վկայականների վավերականության ժամկետը, և շատերն իրենց ցանկությամբ, մի մասը՝ կուսակցությունների ներկայացմամբ, համապատասխան ուսուցում են անցնում՝ տեղամասային ընտրական հանձնաժողովների կազմում ընգրկվելու համար:

Ընտրությունները, ինչպես հանրապետությունում ընթացող մյուս գործընթացները, ըստ ԼՂՀ ԿԸՀ նախագահի, նախևառաջ պահանջում են ճիշտ, գրագետ և, որ ամենակարևորն է՝ բարոյահոգեբանական առողջ մթնոլորտի պահպանում: Քաղաքակիրթ հասարակությանը հարիր է, որ յուրաքանչյուրի դիրքորոշումները լինեն առողջ, գրագետ, քննադատությունները՝ տեղին: Որպես հանձնաժողովականներ՝ դուք ակտիվ քարոզչական աշխատանքների մասնակցելու իրավունքը չունեք,- ասաց Սրբուհի Արզումանյանը,- բայց միևնույն ժամանակ դուք մեր երկրի քաղաքացիներն եք,, հետևաբար ձեր գրագետ դիրքորոշումը, ձեր զսպվածությունը կարող են մնացածների համար կարևոր հանգամանք հանդիսանալ:

ԼՂՀ ԿԸՀ նախագահը հանգամանալից խոսք ասաց ընտրական գործընթացների առանձնահատկությունների մասին, ներկայացրեց քվեարկության կարգը, առանձին դրույթներ: Նա հատկապես կանգ առավ կազմակերպական հարցերի վերաբերյալ դիտորդների կողմից ժամանակին արված դիտարկումների և դիտողությունների վրա՝ այդ համատեքստում տալով որոշակի պարզաբանումներ:

Եթե որոշ պետություններում քվեարկությանը մասնակցելը պարտադիր է՝ մեր հանրապետությունում դա կամավոր հիմունքներով է արվում: Փոխարենը մեզ մոտ խիստ

պարտադիր ու անհրաժեշտ է գաղտնի քվեարկությունը: Հակառակ դեպքում խիստ պատիժ է սահմանված դրա համար (մինչև երկու տարի ազատազարկում):

Ձեր աշխատանքին հետևում են ոչ միայն դիտորդները, վստահված անձինք ու զանգվածային լրատվամիջոցների ներկայացուցիչները, այլև ընտրությանը մասնակցող և այլ կարգավիճակ ունեցող քաղաքացիներ: Հետևաբար ձեր թիվ 1 խնդիրը պետք է լինի ոչ միայն ձեր հիմնական պարտականություններին տիրապետելը, այլև նշված անձանց իրավունքներին ու պարտականություններին տեղյակ լինելը,- ասաց Ս. Արզումանյանը:

Ե. Արզումանյանի ու Ռ. Նազարյանի վարած դասերը վերաբերում էին համապատասխանաբար հանձնաժողովների կազմավորմանն ու քվեարկության կարգին:

Ստեփանակերտի տարածքային ընտրական հանձնաժողովի նախագահ Սեյրան Հայրապետյանի խոսքերով՝ մասնագիտական դասընթացները երկու նպատակ են հետապնդում. առաջինը՝ ցանկացած պարագայում պատրաստ լինել ընտրությունները կազմակերպելուն, և, երկրորդ՝ համակարգում մեծ թվով մարդկանց ընդգրկումն ավելի տեղեկացված է դարձնում բնակչությանը թե՛ ընտրական օրենսգրքին և թե՛ ընդհանրապես ընտրական գործընթացներին: Հետևաբար՝ ավելի թափանցիկ ընտրություններ ենք ունենում, և արդյունքն էլ լինում է ավելի օրինական:

Ներկայումս Ստեփանակերտ քաղաքում կա 34 ընտրական տեղամաս: Այսօրվա դրությամբ, ինչպես նշեց Ս. Հայրապետյանը, շուրջ 180 հոգի արդեն պատրաստվել ու վկայականներ են ստացել: Երկրորդ խումբը՝ դարձյալ 180 հոգի, որոնց թվում են նաև օրվա միջոցառման մասնակիցները, անցնում են դասընթացները: Վերջնական արդյունքում կունենան մոտ 450 հոգի, որոնց մի մասը՝ ռեզերվում:

Նման դասընթացների միջոցով Կենտրոնական ընտրական հանձնաժողովը կատարում է իր կարևոր գործառույթներից մեկը՝ համալրելով տեղամասային ընտրական հանձնաժողովների կազմը, ինչը նաև նպաստում է ընտրական գործընթացների կազմակերպական որակի բարձրացմանը:

Դասընթացների մասնակիցները վերջում դիտեցին ընտրություններին վերաբերող 20-րդ պեանոց ֆիլմ:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովը որոշել է առաջիկայում՝ նոյեմբերի 16-ին, հատուկ դասընթաց կազմակերպել նորեկների համար, որին կմասնակցի մինչև 40 հոգի:

ՄԱ